

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՀԱԶԱՐԱՍՅԱԿԻ ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՀԻՄՆԱԳՐԱՍ-ՀԱՅԱՍՏԱՆ ԾՐԱԳԻՐ**  
**ԳՅՈՒՂԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**Մրցութային առաջարկություն ներկայացնելու հրավեր ( ՄԱՆՀ)**

**Պայմանագրի համարը No RRRP-CW-03/2007 (Լոտ 1, Լոտ 2, Լոտ 3, Լոտ 4, Լոտ 5 և Լոտ 6)**

**Գյուղական ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքներ**

1. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը (ՀՀԿ) դրամաշնորհ է ստացել Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարությունից՝ Հազարամյակի Մարտահրավեր Կորպորացիայի (ՀՄԿ) միջոցով 235,650,000 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ, որն ուղղված կլինի Հայաստանում տնտեսական աճի զարգացման միջոցով աղքատության նվազեցմանը: ՀՄՀ-Հայաստանը մտադիր է այդ դրամաշնորհի հասույթի մի մասն օգտագործել շինարարական աշխատանքների պայմանագրով կատարվող վճարումները պետք է կատարվեն միայն ՀՄՀ-Հայաստանի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում և ենթակա կլինեն Համաձայնագրի և Պայմանագրի Ընդհանուր Պայմանների Հավելված Զ-ի մեջ սահմանված բոլոր դրույթներին, ներառյալ ՀՄԿ-ի կողմից տրվող դրամաշնորհի կիրառման վերաբերյալ սահմանափակումները: Բացառությամբ ՀՄԿ -ի կողմից տրված համաձայնության, ՀՄՀ-Հայաստանից բացի ոչ մի այլ կողմ իրավունք չունի Համաձայնագրի կամ ՀՄԿ-ի դրամաշնորհի հասույթների նկատմամբ: Համաձայնագիրը և հավելյալ համաձայնագրերը ներկայացված են հետևյալ ինտերնետային կայքերում՝ [www.mca.am](http://www.mca.am), [www.mcc.gov](http://www.mcc.gov).

2. Այս գնումային ընթացակարգի շրջանակներում որպես Գնումների Գործակալ ՀՄՀ-Հայաստանի ներկայացուցիչն է «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ը: Այնուամենայնիվ, առաջարկվող պայմանագիրը Կապալառուի հետ կնքվելու է Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ-Հայաստան ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ («ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ) կողմից:

3. ՀՄՀ-Հայաստանի անունից «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ը մրցույթ է հայտարարում հետևյալ շինարարական աշխատանքների կատարման համար:

**Հետևյալ ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքներ**

**Լոտ 1.**

<b>Կապ</b>	<b>Ճանապարհի անվանումը</b>	<b>Հատված</b>
Կապ No 5	Մ-1 - Ագարակ - Բյուրական - Անտառուտ	կմ 0+000 – կմ 8+650
Կապ No 37	Մ-4 - Բալահովիտ – Մայակովսկի - Արամուս – Կաթնաղբյուր - Ակունք - Զառ – Սևաբերդ	կմ 0+000 – կմ 6+800
Կապ No 37	Մ-4 - Բալահովիտ – Մայակովսկի - Արամուս – Կաթնաղբյուր - Ակունք - Զառ – Սևաբերդ	կմ 6+800 – կմ 15+300
Կապ No 37	Մ4-Բալահովիտ – Մայակովսկի - Արամուս – Կաթնաղբյուր - Ակունք - Զառ – Սևաբերդ	կմ 15+300 – կմ 23+100
Կապ No 38	Մայակովսկի – Նոր Գյուղ – Կոտայք – Կապուտան – Հատիս - Զովաշեն	կմ 0+000 – կմ 19+800
Կապ No 39	Արամուս – Կամարիս - Գեղաշեն	կմ 0+000 – կմ 6+300

**Լոտ 2.**

<b>Կապ</b>	<b>Ճանապարհի անվանումը</b>	<b>Հատված</b>
Կապ No 9	Հ - 17 - Մ- 9 Արտենի - Արագած - Գետափ	կմ 25+940 – կմ 38+000
Կապ No 9	Հ - 17 - Մ- 9 Արտենի - Արագած - Գետափ	կմ 38+000-կմ 49+350
Կապ No 11	Մաստարա - Չորագյուղ - Զովասար - Գառնահովիտ	կմ 2+000 – կմ 8+000
Կապ No 11	Մաստարա - Չորագյուղ - Զովասար - Գառնահովիտ	կմ 8+000 – կմ 11+240
Կապ No 15	Մ-5 – Ամասիա - Նալբանդյան – Զանֆիղա - Փշատավան	կմ 0+000- կմ 14+450
Կապ No 16	Արմավիր – Նորավան – Լուկաշին – Խանջյան	կմ 0+000- կմ 6+600
Կապ No 17	S-3-33 Բամբակաշատ - Զրաշեն – Նոր Արտագես	կմ 2+206 – կմ 7+810
Կապ No 19	Մ-5 – Նոր Կեսարիա - Շենավան - Գետաշեն	կմ 0+000 – կմ 6+700

**Լոտ 3.**

<b>Կապ</b>	<b>Ճանապարհի անվանումը</b>	<b>Հատված</b>
Կապ No 110	Չինարի - Այգեձոր - Արծվաբերդ - Վերին Կարմիր Աղբյուր - Բերդ	կմ 0+000 – կմ 32+505
Կապ No 110	Բերդ - Նավուր – Իծաքար	կմ 32+505 - կմ 43+570

**Լոտ 4.**

<b>Կապ</b>	<b>Ճանապարհի անվանումը</b>	<b>Հատված</b>
Կապ No 28	Դոմաշեն - Չովաբերդ - Հրազդան	կմ 6+555 – կմ 12+093
Կապ No 30	Մ-10 - Լճաշեն	կմ 0+000 – կմ 1+700
Կապ No 26	Մ-10 Արծվաքար թաղամաս - Գավառ - Կարմիրգյուղ	կմ 0+000 – կմ 9+200
Կապ No 27	S-4-16 Գավառ – Նորատուս	կմ 2+560 – կմ 4+700
Կապ No 35	Մ-10 - Ներքին Գետաշեն – Վերին Գետաշեն – Մաղինա	կմ 0+000 – կմ 10+185
Կապ No 62	Մ – 3 – Մեծավան	կմ 0+000 - կմ 8+534

**Լոտ 5.**

<b>Կապ</b>	<b>Ճանապարհի անվանումը</b>	<b>Հատված</b>
Կապ No 110	Իջևան-Գանձաքար	կմ 0+000 – կմ 6+970
Կապ No 31	Անտառամեջ – Չորավանք - Դպրաբակ - Այգուտ – Մարտունի – Գետիկ –Թթուջուր – Ճամբարակ - Աղբերք – Մ-14	կմ15+240 – կմ 32+020
Կապ No 31	Անտառամեջ – Չորավանք - Դպրաբակ - Այգուտ – Մարտունի – Գետիկ –Թթուջուր – Ճամբարակ - Աղբերք – Մ-14	կմ 32+020 – կմ 48+800

**Լոտ 6.**

<b>Կապ</b>	<b>Ճանապարհի անվանումը</b>	<b>Հատված</b>
Կապ No 107	Ագարակ – Կարճևան	կմ 0+000 – կմ 4+040
Կապ No 115	Մ – 2 - Չառիթափ	կմ 0+000 – կմ 5+800
Կապ No 13	Ոսկետափ – Վանաշեն – Վեդի - Դաշտաքար – Ուրցածոր	կմ 0+000 – կմ 17+830

4. Այս մրցույթը ընթանում է «մասի և ամբողջի» սկզբունքով: Մրցույթի մասնակիցները, որոնք հավակնում են մեկ կամ մի քանի լոտերի, կարող են մրցակցել մեկ կամ մի քանի լոտերի համար (մրցույթի մասնակիցն իրավունք ունի առաջարկ ներկայացնելու առավելագույնը երեք լոտերի համար): Այն դեպքում, երբ մասնակիցը կստանա մեկից ավելի լոտ և կցանկանա առաջարկել գեղչեր, նրան կտրվի այդ հնարավորությունը, պայմանով եթե այդ գեղչը ընդգրկված կլինի մրցութային հայտի մեջ կամ գրավոր ձևով ներկայացված կլինի մինչև մրցութային առաջարկությունների հանձնման վերջնաժամկետը: Բոլոր մրցութային հայտերը և գեղչերի առաջարկությունները կբացվեն և կզննահատվեն միաժամանակ՝ առաջարկության կամ առաջարկությունների համակցությունները դիտարկելու նպատակով, ներառյալ գեղչերը, որպեսզի Պատվիրատուն որոշի ներկայացված առաջարկության նվազագույն արժեքը: Այս գնման համար կանոնները և ընթացակարգերը տրված են մրցութային փաստաթղթերի մեջ ներառված մրցույթի մասնակիցների համար հրահանգներում:

5. Մրցույթը պետք է անց կացվի Գնումների Համաձայնագրի մեջ նշված միջազգային մրցութային պայմանների համապատասխան, որը ստորագրվել է ՀՄԿ-ի և ՀՄՀ-Հայաստան-ի միջև և ներկայացված է ՀՄՀ-Հայաստան-ի ինտերնետային կայքում [www.mca.am](http://www.mca.am) և բաց է բոլոր՝ Ուղեցույցով նախատեսված իրավասու երկրների մասնակիցների համար: Թեև Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող գնումների գործընթացներին մոտ է իր ձևով, կան **զգալի տարբերություններ**, և կազմակերպություններին խորհուրդ է տրվում մանրակրկիտ ձևով դիտարկել այս հրահանգները:

6. Շինարարության ժամկետը հաշվարկվել է *19 ամիս՝ սկսած 2008թ. մարտից մինչև 2009թ. նոյեմբեր*:

7. Շահագրգիռ իրավասու մասնակիցները հետագա տեղեկատվություն ստանալու և մրցութային փաստաթղթերին ծանոթանալու համար կարող են դիմել «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ ժամը 09:00-ից մինչև 17:00-ը, երկուշաբթիից մինչև ուրբաթ օրը ստորև նշված հասցեով: Մրցութային փաստաթղթերի ամբողջ փաթեթը հնարավոր է ձեռք բերել նույն հասցեով՝ վճարելով վերադարձման ոչ ենթակա գումար՝

- **Լոտ 1-ի համար - 36000 Հայկական դրամ (կամ համարժեք ԱՄՆ դոլար) յուրաքանչյուր լրակազմի համար:**
- **Լոտ 2-ի համար - 55000 Հայկական դրամ (կամ համարժեք ԱՄՆ դոլար) յուրաքանչյուր լրակազմի համար:**
- **Լոտ 3-ի համար - 15000 Հայկական դրամ (կամ համարժեք ԱՄՆ դոլար) յուրաքանչյուր լրակազմի համար:**
- **Լոտ 4-ի համար - 34000 Հայկական դրամ (կամ համարժեք ԱՄՆ դոլար) յուրաքանչյուր լրակազմի համար:**
- **Լոտ 5-ի համար – 20000 Հայկական դրամ (կամ համարժեք ԱՄՆ դոլար յուրաքանչյուր լրակազմի համար:**
- **Լոտ 6-ի համար - 31000 Հայկական դրամ (կամ համարժեք ԱՄՆ դոլար) յուրաքանչյուր լրակազմի համար:**

Գրանցված սուրհանդակի միջոցով փաստաթղթերի փոխանցման դեպքում պահանջվում է վճարել լրացուցիչ 35000 ՀՀ դրամ (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով) յուրաքանչյուր փաթեթի տեղափոխման համար: Գումարը պետք է անմիջապես փոխանցվի «Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ -ին հետևյալ հաշվեհամարին՝

**“ԿԱՍԿԱԴՐԱՆԿ” ՓԲԸ, Երևան, Հայաստան  
Հաշվեհամար - No 23500-78093063313**

ԱՄՆ դոլարով վճարումը կատարելու դեպքում համարժեք գումարը պետք է հաշվարկվի վճարման կատարման օրը՝ հիմնվելով ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից այդ օրվա համար տրված տարադրամի (1 ԱՄՆ դոլարի փոխանակումը 1ՀՀ դրամի) արտարժույթը (ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից տրվող տարադրամի արտարժույթները ներկայացված են հետևյալ ինտերնետային կայքում՝ [www.cba.am](http://www.cba.am)):

8. Մրցութային փաստաթղթերը հասու կլինեն շահագրգիռ մասնակիցների համար սկսած **2008 թ-ի Հունվարի 24-ից**

9. Մրցութային առաջարկները ուժի մեջ կլինեն մրցութային առաջարկների բացումից հետո 90 օրվա ընթացքում և պետք է ներկայացվեն ներքոհիշյալ հասցեով ոչ ուշ քան **2008թ.-ի Մարտի 11-ը , ժամը 15:00 (տեղական ժամանակով)**

10. Բոլոր մրցութային առաջարկները պետք է ունենան բանկային երաշխիք. Այն պետք կազմի հետևյալ գումարը՝

- **Լոտ 1-ի համար – 48 միլիոն Հայկական դրամ** (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով), հիմք ընդունելով մրցութային առաջարկի տարադրամը.
- **Լոտ 2-ի համար – 55 միլիոն Հայկական դրամ** (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով), հիմք ընդունելով մրցութային առաջարկի տարադրամը.
- **Լոտ 3-ի համար - 62 միլիոն Հայկական դրամ** (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով), հիմք ընդունելով մրցութային առաջարկի տարադրամը.
- **Լոտ 4-ի համար – 52 միլիոն Հայկական դրամ** (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով), հիմք ընդունելով մրցութային առաջարկի տարադրամը.
- **Լոտ 5-ի համար - 55 միլիոն Հայկական դրամ** (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով), հիմք ընդունելով մրցութային առաջարկի տարադրամը.
- **Լոտ 6-ի համար - 26 միլիոն Հայկական դրամ** (կամ համարժեքը ԱՄՆ դոլարով), հիմք ընդունելով մրցութային առաջարկի տարադրամը.

11. Ուշ ներկայացված մրցութային առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկությունները կբացվեն մասնակցելու ցանկություն ունեցող մրցութային մասնակիցների ներկայացուցիչների ներկայությամբ **2008թ.-ի Մարտի 11-ին , ժամը 15:15 (տեղական ժամանակով)**

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010  
Նալբանդյան 28  
ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարություն  
Հեռ. (374-10) 58-28-25 կամ (374-10) 56-63-72  
Ֆաքս (374-10) 562 435  
Էլ. փոստ՝ [ahpiu@netsys.am](mailto:ahpiu@netsys.am)

«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի  
Գլխավոր տնօրենի տեղակալ՝  
**պարոն Կարեն Բաղդյան**